ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ԲԴԽ-27-Ո-24 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ ԴԻՄՈՂ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով սույն գործով դիմող կողմից փաստաթղթեր պահանջելու մասին առաջարկությունը, **Ո Ր Ո Շ Ե Ց .**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32 և 42-րդ հոդվածների իրավակարգավորումները՝ դիմող կողմից պահանջել 1 աշխատանքային օրվա ընթացքում Սահմանադրական դատարանին տրամադրել «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ Բարձրագույն դատական խորհրդի 2026 թվականի մարտի 12-ի ԲԴԽ-27-Ո-24 որոշմամբ Հանրապետության նախագահին ներկայացված առաջարկության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործին առնչվող՝ իր տրամադրության տակ գտնվող բոլոր փաստաթղթերը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

25 մարտի 2026 թվականի
ՍԴԱՈ-40